



«ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ» ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նպատակ՝

բացահայտել և գնահատել թիրախային 10 համայնքներում սոցիալական կարիքների առաջնահերթությունները բացահայտելու և առաջնահերթությունները՝ մշակելու համայնքի իրական կարիքներին համապատասխան սոցիալական ծառայություններ:

Հիմնական հարցեր՝

- » Որո՞նք են բնակչության խոցելի խմբերի սոցիալական հիմնական կարիքները և դրանց առաջնահերթությունները.
- » Որքանո՞վ են գործող ծառայությունները արձագանքում առկա սոցիալական կարիքներին.
- » Համայնքներում ինչպիսի՞ նպատակային ծառայությունների կարիք կա.

Մեթոդներ՝

- » Փաստաթղթերի ավանդական վերլուծություն
- » Փորձագիտական հարցում (58)
- » Ֆոկուս խմբային քննարկումներ ծառայությունների շահառուների մասնակցությամբ (40)

ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Ամուր տեղական գործընկերություն և կարող քՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների

ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թիրախային 10 համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են երեք հիմնական խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում սոցիալական կարիքների ձևավորման վրա



Գործազրկության բարձր մակարդակ, ցածր եկամուտ ունեցող ընտանիքների մեծ թիվ, **մանկական աղքատության** համեմատաբար ավելի բարձր մակարդակ



Սոցիալական աջակցության ծառայությունների սակավություն, մարդկանց կարիքներին անհամապատասխանություն, մատչելիության խնդիր



Մասնագիտացված ծառայությունների անբավարարություն և ցածր հասանելիություն

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Աշխատանք գտնելու հարցում դժվարություններ

Գործող սոցիալական ծառայությունների և ընթացակարգերի մասին իրազեկվածության պակաս

Մատուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիր

Մասնագիտական ներուժի խնդիր

Ժամանցի և ակտիվ շփման կարիքի բավարարման հնարավորությունների պակասը

Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հիլֆսվերկ միջազգային կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:



ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

ՈՒԺԵՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ

Աշխատանք գտնելու հարցում դժվարություններ.

- » Գործատուները հակված են աշխատանքի ընդունել ավելի երիտասարդ տարիքի աշխատողների, հատկապես տղամարդկանց.
- » Գործատուները խուսափում են աշխատանքի ընդունել հաշմանդամներին, անգամ մասնակի փոխհատուցման պայմանով.
- » Համայնքում չկան ծառայություններ օգնելու հաշմանդամություն ունեցող անձանց խնամողներին՝ պահպանելու իրենց աշխատանքը.
- » Երիտասարդները ձգտում են աշխատանք գտնել Երևանում.

Գործող սոցիալական ծառայությունների և ընթացակարգերի մասին իրազեկվածության պակաս.

- » Սոցիալապես անապահով ընտանիքները ոչ միշտ են տեղյակ դրամական օգնություն ստանալու կարգին.
- » Որքան ընտանիքն անապահով է և որքան շատ են խոցելիություն ունեցող անդամները, այնքան ցածր է տեղեկացվածությունը ծառայություններից և ընթացակարգերից, ինչը հանգեցնում է մարզինալացման.

Մատուցվող սոցիալական ծառայություններից բավարարվածության խնդիր.

- » Առկա դրամական աջակցության չափերը թույլ չեն տալիս ընտանիքին էական հարց լուծել, չեն համապատասխանում կյանքի նվազագույն պահանջվող պայմանների ապահովմանը.
- » Մասնագիտական ծառայությունների պակաս կամ բացակայություն,
- » Ծառայությունների բաշխումն անհամաչափ է, չկան մոբիլ-արտագնա տարբերակներ.
- » Համայնքների ֆիզիկական պայմանները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց (թեքահարթակ, տրանսպորտ և այլն).

Մասնագիտական ներուժի խնդիր.

- » Անբավարար բժշկական կադրեր

- » Լավ վերապատրաստված նեղ մասնագետների պակաս կամ բացակայություն (լոգոպեդ, հոգեբան, սոցիալական աշխատող և այլն).

Ժամանցի և ակտիվ շփման կարիքի բավարարման հնարավորությունների պակասը

- » Խիստ անհրաժեշտություն կա շփման, գիտելիքների ու փորձի փոխանակման հարթակի և միջավայրի տարեցների համար.
- » Երեխաներին և երիտասարդներին առաջարկվող զարգացման և ժամանցի հնարավորությունները խիստ անհամապատասխան են պահանջարկին ու տեսականու արդիական ձևերին.

Համայնքի ֆիզիկական պայմանների հետ կապված խնդիրներ.

- » Գրեթե բոլոր համայնքներում առկա է լուսավորության, հատկապես գիշերային լուսավորության բացակայության խնդիր.
- » Խաղահրապարակները սակավ են և հարմարեցված ու անվտանգ չեն երեխաների խաղալու համար.
- » Առկա են թափառող շների հետ կապված խնդիրներ.

ՄԻԱՍԻՆ ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ՝ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» եռամյա ծրագիրը իրականացվում է Հիլֆսվերկ Ինթերնեյշնլի կողմից Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի հետ գործընկերությամբ Ավստրիական զարգացման հիմնադրամի և Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է պայքարել աղքատության և անհավասարության դեմ և նպաստել սոցիալական փոփոխություններին, ինչպես նաև ներառական ու կայուն զարգացմանը Հայաստանում՝ մշակելով և ներդնելով տեղական սոցիալական ծրագրերից բխող սոցիալական ծառայություններ՝ ի շահ Հայաստանի մարզերի աղքատ և անապահով ընտանիքներին:

Ծրագիրն իրականացվում է Արմավիրի, Տավուշի, Շիրակի և Այունիքի մարզերի ընդհանուր թվով 10 համայնքներում՝ Մեծամոր, Արմավիր, Մրգաշար, Իջևան, Նոյեմբերյան, Գյումրի, Մարմաշեն, Գորիս, Սիսիան, Տաթև:



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հիլֆսվերկ միջազգային կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: